ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԾՁԲ-25-10/7-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

17 -ը փետրվարի 2026թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝ **Կ. Բրուտյանի**, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **ԱՁ Անուշ Պետրոսյանն ի դեմս, Ա. Պետրոսյանի,** մյուս կողմից՝ այսուհետև՝ «Կատարող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **29.04.2025թ**. կնքված № **ԳՀԾՁԲ-25-10/7-1** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, **(ֆինանսական միջոցները նախատեսվել է ՀՀ կառավարության՝ 25.12.2025թ. №1910-Ն որոշմամբ)** փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն **Հավելված № 1-ի և 2-ի:**

1.2 Կատարողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ծառայությունների (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի 2026թ. կատարման համար ընդհանուր **առավելագույն** գինը կազմում է **10,000,000 (տասը միլիոն) ՀՀ դրամ,** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնած Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի **4.2 և 4.3** կետերով նախատեսված կարգով, համապատասխան եռամսյակներում, առկա ֆինանսական միջոցների հաշվին, **բայց ոչ ուշ, քան 25.12.2026թ.:**

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված Ծառայության մատուցման շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | ԱՁ Անուշ Պետրոսյան |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Արշակունյաց 5 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԱմերիաԲանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1570004526880100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 49557658 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ |

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | Ծառայության անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Բյուջետային դասակարգման ենթաանալիտիկ, CPV կոդ | Աշխատանքների կատարման վայրը | Գնման առավելագույն գինը, (ՀՀ դրամ) | | Գնման ժամանակացույց | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 2026թ. | 2027թ. | 2026թ. | 2027թ. |
| 1 | Էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ | Կաթսայատան ՀՉՍ ավտոմատ համակարգի սպասարկում, էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգում և պահպանում | 50531200/1 | ՀՀ ՊՆ զորամասեր | 5,000,000 | 5,000,000 | I-IV եռամսյակներ, բայց ոչ ուշ քան 21.12.2026թ. | Գնման ժամանակացույց կախմանվի ֆինանսական միջոցների հատկացման դեպքում տարվա ընթացքում ոչ ուշ քան 20.12.2027թ. |

| Հ/հ | Ծառայության անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Բյուջետային դասակարգման ենթաանալիտիկ, CPV կոդ | Աշխատանքների կատարման վայրը | Գնման առավելագույն գինը, (ՀՀ դրամ) | | Գնման ժամանակացույց | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 2026թ. | 2027թ. | 2026թ. | 2027թ. |
| 2 | Գազասարքավորումների վերանորոգում, կարգաբերում, փորձարկում | ՊՆ զորամասերի ճնշման կարգավորիչ կետերի գազային սարքերի, սարքավորումների վերանորոգում, կարգաբերում, ստուգաչափում և սպասարկում | 50531151/1 | ՀՀ ՊՆ զորամասեր | 5,000,000 | 5,000,000 | I-IV եռամսյակներ, բայց ոչ ուշ քան 21.12.2026թ. | Գնման ժամանակացույց կախմանվի ֆինանսական միջոցների հատկացման դեպքում տարվա ընթացքում ոչ ուշ քան 20.12.2027թ. |

**Ծանոթություն՝**

Ծառայություններն մատուցվելու են հանրապետության ողջ տարածքում (ՊՆ զորամասերում) նախատեսված առավելագույն գնի սահմաններում, ՀՀ ՊՆ ԿՃ և ՋԲ վարչության կողմից տրված հայտերի հիման վրա՝ հայտը ստանալուց հետո առավելագույնը 30 օրյա ժամկետում, իսկ դեկտեմբեր ամսվա համար ծառայության մատուցման վերջնաժամկետ է սահմանվում ոչ ուշ քան 21.12.2026թ., միաժամանակ պահպանելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**
ԱՁ Անուշ Պետրոսյան

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված N
N ԳՀԾՁԲ-25-10/7-1 պայմանագրին կից N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Ծառայության անվանում | CPV կոդ | Առավելագույն գին /ՀՀ դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2026թ., ըստ համապատասխան եռամսյակների. այդ ընդ որում, | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ քան 25.12.2026թ. |
| 1. | Էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ | 50531200/1 | 5,000,000 | 1,000,000 | 1,500,000 | 2,500,000 | 5,000,000 |
| 2. | Գազասարքավորումների վերանորոգում, կարգաբերում, փորձարկում | 50531151/1 | 5,000,000 | 1,000,000 | 1,500,000 | 2,500,000 | 5,000,000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**
ԱՁ Անուշ Պետրոսյան

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ